



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ
EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA

From the Ambassador

03 մայիսի, 2006

Սիրելի Հայրենակից,

Խոր վշտով և ցավով տեղեկացնում ենք Ձեզ, որ այսօր՝ մայիսի 03-ին, վթարի է ենթարկվել ԱՐՄԱՎԻԱ ընկերության Երևան-Սոչի (Ռուսաստանյան Դաշնություն) չվերթը իրականացնող A-320 մարդատար ինքնաթիռը: Ինքնաթիռի բոլոր ուղևորները (113 մարդ, ներառյալ անձնակազմի անդամները) վախճանվել են:

Ս.թ. մայիսի 5-6-ը Հայաստանում պաշտոնապես հայտարարվել են սգո օրեր:

Ցավակցությունների համար մատյանը կբացվի Շվեյցարիայում ՀՀ դեսպանությունում (հասցեն՝ 28 Avenue du Mail, 1205 Geneva) առաջիկա ուրբաթ օրը՝ ս.թ. մայիսի 05-ին, ժամը 10.00-12.00 առավոտյան և 15.00-17.00 կեսօրից հետո:

Կիրակի օրը՝ մայիսի 07-ին, ժամը 10.00, Ժնևի Սուրբ Հակոբ եկեղեցում կմատուցվի Սուրբ Պատարագ և հոգեհանգստի պաշտոն՝ ի հիշատակ վթարի զոհ դարձած մեր հայրենակիցների:

Հարգանքով՝

Չոհրաբ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ